Ձեր պնդումներն ու հարցադրումներն ակնհայտ չեն արտացոլում իրեն անկախ ներկայացնող ու հռչակած զանգվածային լրատվության միջոցի գործելաոճը և ակնհայտ է, որ ունեն հստակ միտում: Չեմ ուզում տրվել ինձ հետ առհասարակ առնչություն չունեցող, հստակ ուղղորդված ու մանիպուլյացիոնայդ սադրանքներին, բայց միևնույն ժամանակ բարձր գնահատելով զանգվածային լրատվության դերը մեր երկրում՝ որպես ինստիտուցիոնալ ճյուղ, չեմ ուզում նաև Ձեզ զգաք արհամարհված, և որոշ լրատվական գործունեություն իրականացնողների գործելաոճին համապատասխան՝ տեղեկությունները ներկայացնեք ինչ-ինչ շրջանակների երևակայություններով, ինչու չէ նաև՝ ցանկություններով, իսկ եթե ավելի կոպիտ՝ պատվերով:

Նախ անդրադառնամ նրան, որ ես որևէ առնչություն չունեմ ո՛չ «Սատուրավան» ՍՊԸ-ի, ո՛չ հողի ձեռքբերման և ո՛չ էլ կառուցվելիք համալիրի հետ: Ինձ համար տարօրինակ է այն, որ լրատվական միջոցը անհայտ եղանակով կատարված ուսումնասիրության չստուգված արդյունքը՝ հողի արժեքի վերաբերյալ, կարող է ընդունել որպես բացարձակ իրականություն, և հարցադրումները կառուցել այդ «իրականության» վրա:
Ինձ հասցեագրված Ձեր առաջին հարցին կպատասխանեմ՝ Ոչ:

Ձեր երկրորդ հարցը մեղմ ասած՝ պրոֆեսիոնալ չէ, իսկ եթե դիտարկենք իրավական դաշտում՝ ապա նաև զրպարտող է, որովհետև դրանով կանխակալ գնահատական եք տալիս, թե, իբր, ներգրավվածություն ունեմ հողամասի գնման և կառուցապատման ծրագրում:
Առայժմ կսահմանափակվեմ միայն պրոֆեսիոնալիզմի բացակայության մասին կանխավարկածով: Կարծում եմ հստակ և հասկանալի պատասխանեցի Ձեր հարցերին:
Այսուհետ ակնկալում եմ օբյեկտիվություն և հույս ունեմ կլինեք ինքնուրույն ու պրոֆեսիոնալ:


Anna Mkrtchyan
кому: мне
10:14 (1 час назад)

Ձեր պնդումներն ու հարցադրումներն ակնհայտ չեն արտացոլում իրեն անկախ ներկայացնող ու հռչակած զանգվածային լրատվության միջոցի գործելաոճը և ակնհայտ է, որ ունեն հստակ միտում: Չեմ ուզում տրվել ինձ հետ առհասարակ առնչություն չունեցող, հստակ ուղղորդված ու մանիպուլյացիոնայդ սադրանքներին, բայց միևնույն ժամանակ բարձր գնահատելով զանգվածային լրատվության դերը մեր երկրում՝ որպես ինստիտուցիոնալ ճյուղ, չեմ ուզում նաև Ձեզ զգաք արհամարհված, և որոշ լրատվական գործունեություն իրականացնողների գործելաոճին համապատասխան՝ տեղեկությունները ներկայացնեք ինչ-ինչ շրջանակների երևակայություններով, ինչու չէ նաև՝ ցանկություններով, իսկ եթե ավելի կոպիտ՝ պատվերով:
Նախ անդրադառնամ նրան, որ ես որևէ առնչություն չունեմ ո՛չ «Սատուրավան» ՍՊԸ-ի, ո՛չ հողի ձեռքբերման և ո՛չ էլ կառուցվելիք համալիրի հետ: Ինձ համար տարօրինակ է այն, որ լրատվական միջոցը անհայտ եղանակով կատարված ուսումնասիրության չստուգված արդյունքը՝ հողի արժեքի վերաբերյալ, կարող է ընդունել որպես բացարձակ իրականություն, և հարցադրումները կառուցել այդ «իրականության» վրա:
Ինձ հասցեագրված Ձեր առաջին հարցին կպատասխանեմ՝ Ոչ:
Ձեր երկրորդ հարցը մեղմ ասած՝ պրոֆեսիոնալ չէ, իսկ եթե դիտարկենք իրավական դաշտում՝ ապա նաև զրպարտող է, որովհետև դրանով կանխակալ գնահատական եք տալիս, թե, իբր, ներգրավվածություն ունեմ հողամասի գնման և կառուցապատման ծրագրում:
Առայժմ կսահմանափակվեմ միայն պրոֆեսիոնալիզմի բացակայության մասին կանխավարկածով:
Կարծում եմ հստակ և հասկանալի պատասխանեցի Ձեր հարցերին:
Այսուհետ ակնկալում եմ օբյեկտիվություն և հույս ունեմ կլինեք ինքնուրույն ու պրոֆեսիոնալ: